մասնակցում էին Հայ. Խորհրդի աշխատանքներին, ըստ էության բացասական դիրք ունէին և պայքարում էին անկախության դէմ։ Ժողովրդականները սկզբունքով ճանաչում էին անկախությունը, բայց Հայ. Խորհրդում, համարեա միշտ, ընթանում էին ձեռք-ձեռքի սոց.-դեմոկրատների և սոց.-յեղափոխականների հետ, իսկ Թիֆլիսում նրանց կուսակիցները ջանք չէին խնայում՝ վարկաբեկելու Հայաստանի կառավարությանը, որով, անուղղակի կերպով, հարուածում էին և Հայաստանի պետականության։ Բացի դաշնակցականներից — այն էլ ո՛չ բոլորը — շատ քչերն էին հաւատում, որ հանրապետությունը կապրի ու կամրանայ։

Արևմուտքում գարգացող դէպքերը, սակայն, հետզհետէ փոխեցին տրամադրությունները և՛ հայկական շրջաններում, և, մանաւանդ, հայ բուրժուական մտաւորականության մէջ։ Նրանք կամաց-կամաց փոխեցին իրենց վերաբերումը դէպի Հայաստանը և, երէկուայ անհաշտ հակառակորդները, սկսեցին հասկացողության դեռին որոնել՝ արծարծելով Հայաստանի իշխանության վերակազմության ծրագիրը կօալիցիոն հիմունքներով։ Այդ նպատակով, հոկտեմբերի վերջերին Երևան հասան Հայ Ժողովրդական Կուսակցության ներկայացուցիչները՝ Սամ. Յարությունեանի և Մին. Բերբերեանի գլխաւորությամբ՝ Հ. Յ. Դաշնակցության հետ բանակցելու՝ կօալիցիոն կառավարություն կազմելու ծրագրով։ Թիֆլիսի Ժողովրդականների տրամադրությունը համապատասխանում էր և Երևանի Ժողովրդականների ձգտումներին, որոնք աւելի ամուր կանգնած Հայաստանի տեսակէտի վրա՝ ջերմօրէն պաշտպանում էին համերաշխության ու գործակցության գաղափարը։

Հ. Յ. Դաշնակցության շարքերում էլ կօալիցիայի հարցը դրուած էր հերթի։ Հոկտեմբերի վերջերին սկսել էր կառավարական սուր տագնապ. ընդդիմադիրների անվերջ քննադատություններից ու յարձակումներից գլուած, ինչ որ խնդրի առթիւ ստանալով անվստահության քէ՝ Քաջազունին հրաժարական էր ներկայացրել։ Առհասարակ, Հայ. Խորհրդում ստեղծուել էր անշնչելի մթնոլորտ, և այդ դրության վերջ տալու համար Հ. Յ. Դաշնակցությունը մտածում էր առաջ բերել կուսակցությունների գործակցություն։

Գործակցությունը ներկայացում էր երկու ձևով. ոմանք կողմնակից էին բոլոր կուսակցությունների մասնակցությամբ կառավարություն կազմելուն, բայց կային և զուտ ընկերվարական նախարարության կողմնակիցներ։ Այս վերջին միտքը մէկ կողմ թողնուեց, որովհետև Հ. Յ. Դաշնակցության կողմից արուած առաջարկի վրա սոց.-դեմ. և սոց.-յեղ. ֆրակցիաները դրին ակնյայտնի կերպով անիրագործելի պայմաններ. առաջինները պահանջեցին երկու տեղ և անպայման ներքին կամ արտաքին գործոց նախարարությունը. վերջիններները իրենց համար առանձին պահանջներ չունէին, բայց վճռականապէս դէմ էին, որ արտաքին գործոց նախարարությունը յանձնուի Ժողովրդականներին և ներքինը՝ սոց.-դեմոկրատներին։ Այսպիսով, ընդհանուր կօալիցիայի խնդիրը մէկ կողմ էր ընկնում. միակ ելքը մնում էր